Փէրիա-Նամակերտ, 20 Օգոստոս, 1918.

Սիրելի Վարդուհի,

Ներիր ինձ, որ Նամակս ուշացրի։ Յունիս 3-ին, Երկուշաբթի առաւօտ, ժամը 7-ին ապահով հասայ Փէրիա գաւառի առաջին գիւղը՝ Նամակերտ։ Քեզանից բաժանուելիս խնդրում էիր, որ գրեմ տպաւորութիւններս. այժմ, մանրամասն ուսումնասիրութիւնից յետոյ, սիրով կը կատարեմ ցանկութիւնդ, թէև չգիտեմ իսկապէս, թէ գիւղական կեանքի ո՞ր մասը պատկերացնեմ Քեզ, որ չտխրես, քանի որ այստեղ ամեն ինչ տխուր է և մռայլ, ամեն ինչ յուսահատեցուցիչ է և ճնշող. մխիթարական համարեա՛ ոչինչ չկայ, բայց և այնպէս ես Քեզ կը գրեմ դարձեալ պարբերաբար այս գաւառի հայ գիւղացիութեան մասին, որն իր տուն ու տեղով, կենցաղով, բարք ու վարքով և իր կողքին կանգնած պարսիկ կալւածատէր առբաբներով նոյնքան հետաքրքիր մի պատկեր է ներկայացնում. ես կաշխատեմ նկարագրել այդ պատկերն այնպէս, ինչպէս որ գոյութիւն ունի, իր իսկական գոյնով, առանց չափազանցութիւնների, միայն ներիր ինձ սիրելիս, որ իմ առաջին յօդուածում ես անմիջապէս չեմ սկսում գիւղացիների կեանքից և անցնում եմ գաւառի տեղական—աշխարհագրական ու կլիմայական կազմութեանը. կարծում եմ, որ դա Քեզ չի ձանձրացնել և Դու դրանով հնարաւորութիւն կունենաս աւելի մօտիկից ծանօթանալու այդ գաւառի մասին։ Ուրեմն Քեզ որոշ գաղափար տալու համար ես կսկսեմ հէնց գաւառի սահմաններից և բնական կազմութիւնից, ապա կանցնեմ լեռների, ջրերի, ջերմուկների, հանքային ջրերի, օդ և կլիմայի, բուսականութեան և այլ երևոյթներին։ Այժմ այս բոլորն առանձին-առանձին վերնագրերով կը պատկերացնեմ Քեզ։

* * *